

ՅԼՈՒ ԳԼՈՒԽ

Փաւստոս Բիւզանդը պատմում է Գ. է. գլխում, թէ երբ հայոց սպարապետ Վաչէ Արտաւազդեան Մամիկոնեանը Յլու գլուխ լեռան և Օշական բերդի մօտ յաղթեց Մազքուլթներին և սոցա թագաւոր Սանէսանին, Խոսրով Կօտակը շնորհեց նորան կալուածքներ:

«Եւ ետ Վաչէի զօրավարի զականս Զանջանակին, և զԶրաբաշխիս, և զՅլու գլուխ ամենայն գաւառակօքն հանդերձ. նոյնպէս և այլոց նախարարացն մեծամեծ պարգեւս» (Բիւզանդ Գ. Ը, էջ 18. Վենետիկ 1889):

Արդ սրտեղ են գանւում Մամիկոնեաններին շնորհուած այդ կալուածքները: Զանջանակ անունը միայն Փաւստոսի մէջ է յիշում և տեղը մեզ անյայտ է: Թերևս գանւում է Զրաբաշխիքի և Յլու գլխի միջև կամ շուրջը: Զրաբաշխիքը, որ սովորաբար Զրաբաշխ ձևով է յայտնի, ինչպէս աւելացնում է Բիւզանդը, Սուկաւէտ կամ Քէօսէ-դաղն է:

Սակայն այստեղ մեր խնդիրը Յլու գլխի մասին է:

Հայր Ղևոնդ Ալիշանը «Յլու գլուխ»-ը գնում է Այրարատում Օշականի մօտ ասելով: «Յարևելից հարաւոյ Օշականի ամբառնայ երկայնանիստ լեռնաբլուրն Յլու գլուխ, և է այն անշուշտ յօրում բանակեալ ասէ Բուզանդ զճամբարն մաղթաց, յաւուրս Խոսրովայ որդւոյն Տրդատայ... և ինչ»: Ապա վկայութեան է կոչում Բիւզանդի Գ. է. գլուխը: Այրարատ էջ 194. Վենետիկ 1900.

Եթէ Ալիշանն ուզում է ասել, որ այժմ Յլու գլուխ անունով լեռնաբլուր կայ Օշականի մօտ, ճիշտ չէ, որովհետեւ տեղացիներից հարց ու փորձ անելով ոչ այդպիսի և ոչ իսկ նման թուրքերէն անուն լսեցինք: Իսկ եթէ Ալիշանի կարծիքը հիմնւում է Բիւզանդի վերոյիշեալ ցուցմունքի վերայ, մեւք տարբեր եզրակացութեան ենք հասել:

Բիւզանդը Գ. է. գլխում պատմելով, որ Սանէսան մազքթաց թագաւորը Կովկասի զանազան ազգեր միացնելով Հայաստան արձակուեցաւ, ասում է. «և ելին լցին ծածկեցին զամենայն երկիրս Հայոց... սիւռեցան տարածեցան զսահմանօքն, լի և լի ծաւալեցան մինչև ի փոքրիկ քաղաքիկն Սատաղու, և մինչև ի Գանձակ ի սահմանս Ատրպատական խաղացուցին, ի մի վայր ժողովեցին ի ժամագիր կողմանս յայրաւսեան գաւառի բանակ մեծ լինէր» (Բիւզանդ Գ. է. 16)։ Երեւի թէ ընդգծեալ բառերն են տեղիք տուել Հ. Ալիշանին «Յլու գլուխ»-ը Այրարատում Օշական գիւղի մօտ գնելու, որովհետև անմիջապէս մի քանի տող յետոյ նոյն գլխում պատմում է այդ «լերան» ըստ Ալիշանի «լեռնաբլուրի» ճակատամարտը։ Սակայն վերելի «ի ժամագիր կողմանս յայրարատեան գաւառին բանակ մեծ լինէր» դարձուածքը ցոյց է տալիս, որ Այրարատը այդ վայրենիները իւրեանց ժամագրութեան տեղ և կեդրոն էին ընտրել։

Բայց Սանէսանը Հայաստանում մնաց մի տարուան չափ և տիրել էր համարեայ բովանդակ երկրին ինչպէս աւելացնում է Բիւզանդը։

«Եւ նա (Սանէսանը) բռնացեալ ունէր զերկիրն առհասարակ իբրև տարի մի»։ Ի հարկէ այդ միջոցին Մազքութներն ասպատակ էին սիւռել զանազան կողմեր, մանաւանդ, ուր քաշուել էին Խոսրով և ծերունի Վրթանէս հայրապետը, այն է «Կովգայ Դարենից» բերդի կողմերը և աւելի հեռու։ Կովգայ կամ Կոգայ երկրում յիշուած այդ «ամուր բերդը» Բիւզանդի մէջ երեք ձևով է յիշուած «Դարենից, Դարենաց, Դարօնից» (Փաւստոս Գ. է. էջ 16, Դ. խ. էջ 157, Ե. դ. էջ 199)։ Այս երեք ձևերից վերջինը յիշեցնում է մեզ Դոբոնք անունը։ Իսկ Դոբոնքի համար Յակովբ Կարնեցին ասում է։

«Երկիրն վերին Բասենոյ... ունի մեծ բերդ պարսպաւոր... որ հայ բարբառով կոչեն այժմ Դոբոնք, և թուրք բարբառով Հասան-զալա կոչի»։ (Յ. Կարնեցի էջ 19, Կ. Կոստանեան Վաղարշապատ 1903. Հմմ. այս

մասին և մեր յօդուածը, «Լուծայ» 1904. թ, 1, էջ 204)։

Համոզուելու համար թէ ճիշդ է մեր վերոյիշեալ ենթադրութիւնը, որ Մազբութները Դորոնքից՝ այսինքն հասան զալայից էլ դէնը գէպի հարաւ են արշաւել. քննենք նախ հ. Ալիշանի ենթադրութիւնը։

Ալիշանի կարծիքը Յլու գլխի մասին ծագում է այն հանգամանքից, որ նա, ինչպէս երևում է, հիմնուելով Խորենացու Գ. թ. գլխում հաղորդածի վրայ, համարում է թէ մի ճակատամարտ է տեղի ունեցել, այսինքն թէ Բիւզանդի յիշած Յլու գլխի և Խորենացու Օշականի առաւպարի ճակատամարտը նոյն են և միևնոյն տեղումն են եղել, և ուրեմն Յլու գլուխ լեռն էլ պէտք է Օշականի մօտ լինի։

Սակայն Բիւզանդից պարզ երևում է, որ Յլու գլխի ճակատը ջուկ է և Օշականինը ջուկ։ Հետեւենք ուրեմն Բիւզանդի պատմութեան ընթացքին։

Վաչէ Մամիկոնեանը Յունաց կողմերից վերադառնալով գունդ կազմեց և ընկաւ թշնամիների բանակի վրայ, «Յաւաւատուն ժամուն այգենալոյն պաշտամանն, զի բանակեալ էին նոքա ի լերին՝ որ կոչի Յլու գլուխ» (Փաւստոս Գ. է. էջ 16)։

Այս ճակատամարտում ահա բոլորին շարգելուց և գերիներն ազատելուց յետոյ, շարունակում է Փաւստոսը Վաչէի մասին։

«Եւ յետ այսորիկ առնոյր զաւարսն, խաղայր գնայր երթայր իջանէր ի դաշտն այրարատեան գաւառին. երթայր գտանէր զՍանէսան թագաւոր Մազբութաց բուն գընդաւն ի Վաղարշապատ քաղաքի»։

Այս նկարագրութիւնից երևում է, որ յաղթական հայերը հեռու տեղից և բարձունքներից իջան Այրարատեան դաշտը։ Եթէ հայերն իջնէին Օշականի, ուրեմն և Վաղարշապատի հիւսիսային կողմից Այրարատեան դաշտը, էլ ինչպէս կարող էր Սանէսանը իւր զօրքով վաղարշապատից փախչել «ի քաղաքէ անտի յառապարն ի կողմն Օշական բերդին», որ Վաղարշապատի հիւսիսային կողմումն է։

Մնում էր ուրեմն, որ հայերն իջնէին ճիշտ Վաղարշապատի հակառակ այսինքն հիւսիսային կողմից, այժմեան Բարդուղ և Զրաքաշխի լեռներից:

Միթէ պարզ չէ, որ Յլու գլխի և Օշականի ճակատամարտները զանազան են և իրարից հեռու են տեղի ունեցել, քանի որ հայերը Յլու գլխի ճակատամարտից յետոյ գնում իջնում են Այրարատեան դաշտը, Վաղարշապատից քշում են Մաղքութներին, որտեղ գտնւում էր Սանէսանը բուն գնդաւ: «Բուն գնդաւ» բառերը յայտնում են, որ Յլու գլխի գունդը տարբեր, ուրիշ կամ կողմնակի գունդ էր և որ Սանէսանն ինքը Յլու գլխի ճակատին չի մասնակցել, այլ Վաղարշապատից քիչ հեռու Օշականի առապարի մօտ Այդ չէր կարող լինել և այն պատճառով, որ Օշականի մօտ «լեռ» չկայ, այլ շատ շատ բլուրներ: Երևի այդ զգալով հ. Ալիշանը «Յլու գլուխը» «լեռնաբլուր» է կոչում, մինչդեռ Բիւզանդն ասում է «ի լերինն Յլու գլուխ»: Այդ երկու ճակատամարտները տարբեր են և իրարուց հեռու պէտք է լինին հետեւեալ պատճառով. Խորենացին Գ. Թ. գլխում պատմում է, որ Խոսրով Կոտակը Օշականի առապարի կռուին մեծ քաջութիւն ցոյց տուող Վահան Ամատունուն նուիրում է Օշական գիւղը. «Վասն որոյ պարգևէ նմա արքայ զտեղի ճակատուն զՕշական»: Խորենացու այս ըստ երևոյթին Բիւզանդից տարբեր հանգամանքը հաւաստի է գտնւում Բիւզանդի այն վկայութեամբ, թէ բացի Վաչէից Խոսրովը միւս նախարարներին էլ պարգև է տուել, «նոյնպէս և այլոց նախարարացն մեծամեծ պարգևս (ետ)» (Բիւզանդ Գ. Ը. էջ 18): Բայց արդ կարելի է, որ Խոսրովն Օշականը պարգևէր Ամատունուն, և այն գիւղի իբրև թէ հարաւային արևելեան կողմը գտնուած մի լեռնաբլուր, ինչպէս Ալիշանն է ասում, պարգևէր Վաչէ Մամիկոնեանին և այն էլ իւր ամենայն գաւառակօրն: Եւ որտեղ են Մամիկոնեանց այդ գաւառակները, որ ոչ մի պատմագիր էլ չէ յիշում:

Այժմ մեզ մնում է որոշել, թէ ուր պիտի փնտռենք Յլու գլուխ լեռը: Գաթըրճեանը իւր Տիեզերական պատ-

մութեան մէջ 20 թուականի Ն. Ք. դրամներ նկարագրե-
լով՝ ասում է. ի միջի այլոց կան գահեկաններ, որոնք ունին
«Պատկեր ինչ այսպիսի, զի գիքն յաղթութեան թեաւոր՝
երանս ածեալ ի վերայ Յլու սանձէ զնա, որով ակնարկի
նուաճումն Հայոց աշխարհին յայնկոյս Տաւրոսի, որ թարգ-
մանի Յուլ, և առանձինն Տարոնն նահանգի Հայոց, զոր
կոչէին Հռոմայեցիք Taurantium կամ Taurauntium, մա-
նաւանդ զի ըստ Ղիբանիոսի իսկ վկայելոյ՝ նշանակ Տաւ-
րոս լերին էր Յուլ ինչ պղնձի յարեւելս» (Գաթըրճեանց
Տիեզերական պատմ. Բ. էջ 25. ծանօթ. 3)։

Վաւաճական գահնամակի եօթանասուն հայ նախա-
րարութեանց կդ. կոչւում է «Յուլ» (Այրարատ էջ 431).
Այրարատի մէջ այդ անուան ծանօթութեան տակ Ալիշան
նկատում է «Թուի իշխան կողմանց Տաւրոսի»։ Իշխան
ասելն անպատեհ է, քանի որ գահնամակի եօթանասուն
անուանց մէջ յիշուում են իշխանութեանց կամ մեր նա-
խարարութեանց տոհմերի անունները։ Ուրեմն կար մի իշ-
խանութիւն այսինքն նախարարութիւն Յուլ անունով, որ
պէտ է փնտռել հայկական Տաւրոս լեռների մէջ։ Գա-
թըրճեանի ասածից և Վաւաճական գահնամակից յետե-
ում է, որ Յուլը պէտք է որոնել Տարօնում։ Իսկ Յլու
գլուխն էլ անշուշտ Յուլ շղթայի մի գաղաթը պիտի լինի։
Այս լեռան տեղը ճիշտ որոշել կարելի է նոյն
Բիւղանդի վկայութեամբ, Դանիէլ մեծ քորեպիսկոպոսի
մասին Բիւղանդն ասում է «Եւ կայեանք տեսչութեան
իւրոյ յանապատաց ի շէնս իջանէր վան գործոյ սոցա,
ի գլխաւոր տեղիսն յեկեղեցեացն՝ *) լինէր։ Եւ յաճախ
յակն աղբերն ի ներքոյ սարաբարձր մեհենատեղւոյն
Հերակլայ, որ կայ դէմ յանդիման լերինն մեծի, որում
Յուլն անուանեալ կարգան, ի բազնին տեղւոյէ ի բա-
ցադոյն իբրև քարընգէց մի ի ներքոյ կուսէ, ի գոյզն

*) Անշուշտ «յեկեղեցեացն» պիտի լինի «եկեղեցեացն».
Ինչպէս որ սոյն գլխի հէնց սկզբում «եկեղեցաց»ը պիտի լինի
«եկեղեցեաց», Ահա այդ տեղը։

ծործորակի ի սակաւ անտառակին ի հացուտ պուրակին՝ որում անուն տեղւոյն իսկ Հացեացն գրախտ կոչեն» (Բիւզանդ Գ. ժդ. 38).

Բիւզանդի միւսնոյն գլխում քիչ վերեւ երևում է «տարաբարձր մեհենատեղին Հերակլայ» գտնուում է Աշտի-

«Վերակացու և գլխաւոր եկեղեաց նահանգին Տարօնոյ, Գրիգորի ձեռակաւն իշխանութեանն կողման մասին գործակալութեանն մեծի դատաւորութեանն» (Բիւզանդ Գ. ժդ. էջ 36):

Ընդգծուած բառերից դուրս է գալիս, որ Դանիէլ եպիսկոպոսն էր Տարօնոյ նահանգի եկեղեաց (գաւառի), կամ եկեղեաց նահանգի՝ Տարօնոյ (գաւառի) վերակացու և գլխաւոր էր:

Թէև մեր մատենագիրները նահանգ և գաւառ բառերը շատ խառն են դործածում, ոչ բոլորովին այն մտքով ինչպէս այսօր. սակայն և այնպէս ոչ Տարօն նահանգում եկեղեաց (գաւառ) է եղել, ոչ էլ եկեղեաց նահանգում Տարօն (գաւառ): Ինքը Փաւստոսը եկեղեքն իբրև գաւառ յիշում է վեց անգամ. չորս անգամ (Գ. ք. 6: Գ. ժդ. 38: Ե. իդ. 222: Զ. ա. 270) գաւառ բառի հետ, մնացեալ երկու անգամն ևս (Գ. ժդ. 117: Գ. իդ. 146) մի քանի տող վերև և կամ ներքև իբրև գաւառ: Որ այս գաւառը Բարձր Հայք նահանգում է գրանւում, քաջ յայտնի է Խորենացու աշխարհագրութիւնից:

Միւս կողմից թէև Տարօնը Փաւստոսից չորս անգամ կոչւում է «երկիր» (Գ. ք. 7: Գ. ժդ. 43: Գ. ժթ. 48: Ե. ք. 195.) և վեց անգամ ևս «գաւառ» (Գ. ժդ. 44, 45: Գ. ժթ. 49: Գ. ժդ. 117: Զ. ժդ. 280, 281): Բայց նոյն Փաւստոսը մեր միւս հնագոյն դասական հեղինակների պէս նահանգ բառը շատ ընդհանուր առմամբ է գործածում զօր. եպիսկոպոսը Փաւստոսից կոչուած է նահանգ (Գ. ժ. 25): Իսկ մի այլ տեղում «երկիր» «գաւառ» Տարօնը կոչւում է միանգամայն և «նահանգ». «Ի նահանգէն Տարօն գաւառէն» (Գ. ժե. 127): Այսպէս էլ վերևի օրինակում նահանգ անունը վերաբերում է Տարօնին: Ուրեմն վերևի օրինակը այսպէս պէտք է թարգմանել «Տարօնոյ նահանգի եկեղեաց (գաւառ)». սակայն մենք այն էլ գիտենք, որ Տարօնում եկեղեաց գաւառ չկայ:

Եթէ եկեղեաց անուան առաջ ստորակէտ դնենք, կամ մի և աւելացնենք միտք դուրս կը գայ «վերակացու և գլխաւոր եկեղեաց» (և) նահանգին Տարօնոյ». բայց մեզ յայտնի չէ թէ Դանիէլը այդպիսի պաշտօն ունէր. մինչդեռ վերոյիշեալ բառերից

շատի մօտ «Եւ էր սորա (Դանիէլի) ընկալեալ զքորեպիս-
կոպոսութեան ձեռնադրութիւն աստիճանին ի ձեռաց մե-
ծին Գրիգորի, յաւուրս յորում կործանեաց զբազինս
մեհենիցն Հեռակիեայ՝ այսինքն Վահագնի, որում տեղւոյ
Աշտիշատն*) կարդացեալ. որ (ո՛ւր) նախ եղ զՀիմունս
եկեղեցւոյ սրբոյ»։ Ագաթանգեղոսի վկայութեամբ Աշտի-
շատ գտնուում է Քարքէ լեռան վրայ։ «Լուաւ Գրիգորիոս
թէ Վահէվահեան մեհեանն մնացեալ երկրին Տարօնոյ,
մեհեանն մեծագանձ . . . ութերորդ պաշտօն . . . Վիշա-
պաքաղն Վահագնի, յաշտից տեղիք . . . ի սնարս լերինն
Քարքեայ ի վերայ գետոյն եփրատայ, որ հանդէպ հայի
ի մեծ լեառնն Տաւրոսի, որ և անուանեալ ըստ յաճա-
խապաշտաման տեղեացն Յաշտիշատ»։ Ագաթանգեղոս
Թիֆլիզ 1883, ՃԺԴ. էջ 463։ Հմմ. այս մասին Զենոր
պատմ. Տարօնոյ էջ 96, Վենետիկ 1883։—

Պարզ է որ Յուլին մեր հայկական Տաւրոսն է, իսկ
Յլու գլուխը հայկական Տաւրոսի գագաթ։ Ուրեմն ան-
շուշտ սիմ լեռների, այժմեան Սասունի հիւսիսային լեռ-
նաշղթայի զագաթներից մինը, որ Տարօնի սահմանն է
կաղմում և գտնում էր Քարքէ լեռան հանդէպ, Աշ-
տիշատի կամ Յաշտիշատի մօտ, որտեղ ըստ Բիւզանդի

յետոյ Փաւստոսը յարում է Դանիէլի մասին «Ունէր զիշխանու-
թիւն զայն առանձին. այլ վերակացու և հրամանատար տեսուչ
և հոգաբարձու ամենայն եկեղեցեացն Հայոց Մեծաց ընդ ամե-
նայն տեղիս . . . ունէր սա գաստիճան ամբողջն գլխաւորու-
թեան Տարօնոյ»։ Ուրեմն «եկեղեացը պէտք է լինի եկեղեցեաց»,
այսպէս «վերակացու և գլխաւոր եկեղեցեաց նահանգին Տա-
րօնոյ»։

Փաւստոսը շարունակում է և բացադրել, թէ Տարօնի,
ինչպէս և Դարանաղիքի և Այրարատի մէջ գտնուած քրիստոնէա-
կան սրբավայրերը հայերից «պատուեալք լինէին»։ Որ այս գա-
ւառները ինչպէս և եկեղեցաց գաւառը, Բղնունիք և Ծովքը
Ներսէսի ձեռակաւն այսինքն սեփական իշխանութիւնն էին
վկայում է Փաւստոս ինքը։ (Դ. Ժգ. էջ 107)։

*) Աշտիշատ գիւղում այժմ ապրում են հայեր և քեր-
դեր, վերջիններս կոչում են Դերիկ։

դոնուում էր «մեծ, նախ և առաջին եկեղեցին», «այդ եկեղեցեացն ամենայն Հայաստանեայց» (Բիւզանդ. Գ. Ժդ. 36)։ Այժմ պէտք է հասկանալի լինի, թէ Սանէսանի զօրագնդերը մինչև Աշտիշատ հասել էին, այդ հարուստ տաճարը կողոպտելու յուսով։ Բիւզանդը յիշում է Յլու գլխի կռուի օրուայ նոյն իսկ ժամանակը. «յառաւօտեան ժամուն այգենալոյն պաշտամանն», որ մենք հասկանում ենք այսպէս, թէ այդ ճակատամարտն օրուան այն ժամանակն է սկսել, երբ նախկին մեհենում, այժմ եկեղեցում առաւօտեան ժամասացութիւնն էր կատարւում։

Սանիան Կանայեցոց.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ուղարկելով Թեֆլիսի սարկաւազներն և դպիրներն թեմիս սրբազան Առաջնորդին տուած խնդրի պատճէնը, որը վերաբերում է իրենց դասակարգի ազնուացման, նիւթական աննախանձելի վիճակի բարւոքմանը՝ խնդրում եմ տեղ տուէք նրան «Արարատ»-ի առաջիկայ համարում։

Այս մեր խնդրի մասին լուր տուինք «Տարադ»-ին և «Մշակին»-ին։ Իբրև լուր տպուեց և անցաւ։ Ոչ ոք չհետաքրքրուեց այդ հարցով։ Շատ տարօրինակ է մեր հասարակութիւնը. նա կարծէք հետաքրքրւում է ժամանակակից ամեն տեսակ հարցերով, մինչև անգամ նրան զբաղեցնում է սափրիչների, մսագործների, կօշիկարների և շատ ուրիշների վիճակը՝ պաշտպանում է նրանց. խօսում և գրում են, որ նրանք էլ մարդ են մարդկանց շարքում, ապա ուրեմն նրանց հետ էլ պէտք է մարդավարի վարուիլ և նրանք էլ պէտք է վարձատրուին, որ զոնէ շատ համեստ կարողանան տպրել, բայց ոչ ոք չուզեց հետաքրքրուել իրենց եկեղեցւոյ պաշտօնեաների հարցով։ Թեմիս սրբազան Առաջնորդը այս հարցը իրա սրտին շատ մօտ հարց համարեց և պատգամաւորներին խոստացաւ մօտիկ ապագայում զբաղուելու նրանով։

Յանկալի է, որ շատերը իրենց սրտին մօտ հարց համարէին այս կարևոր խնդիրը և հրապարակաւ մշակուէր։ Իբրև «Արա-